«Զարգացման քաղաքականության գործառնություն» ծրագրի արդյունքները
(2009 թ. հուլիս – 2011 թ. դեկտեմբեր)

«Զարգացման քաղաքականության գործառնություն» ծրագրի իրականացումն ապահովել է նշանակալի արդյունքներ, մասնավորապես՝

1. Սոցիալական ոլորտում ծրագիրը տվել է հետևյալ արդյունքները.

- Չնայած տնտեսական ճգնաժամին՝ 2009, 2010 և 2011 թթ. պետական բյուջեներում բարձրացվել և պահպանվել է սոցիալական ապահովության համակարգի, կենսաթոշակների և անապահով ու խոցելի խավերի համար սոցիալական ապահովության առաջնային ծրագրերի ֆինանսավորումը: **Սոցիալական պաշտպանության և կենսաթոշակների բաժինն ընդհանուր ծախսերում 2008թ. 24,8 տոկոսից հասել է 31,7 տոկոսի՝ 2011-ին**: Հաշվի առնելով ընթացող հարկաբյուջետային համախմբումը (կոնսոլիդացիան)՝ սոցիալական պաշտպանության ծախսերի աճը հնարավորություն է տվել կառավարությանը խուսափելու առավել անապահով ընտանիքներին տրամադրվող օժանդակության զգալի կրճատումներից՝ չնայած այդ ընտանիքների թվի զգալի աճին (սոցիալական ծրագրերի ընդհանուր ընդգրկումը նվազել է՝ աղքատ բնակչության 80 տոկոսից իջնելով ընդամենը 78 տոկոսի, մինչդեռ աղքատների թիվը 2009-2010 թթ. աճել է 270 հազարով):

- **Բարելավվել է շահառուների թիրախավորումը «Աղքատության ընտանեկան նպաստ» (ԸՆ) ծրագրում.** ԸՆ ծրագրի վերանայումն իրականացվել է ոչ իրավասու ընտանիքները բացառելու և տնտեսված միջոցներով աղքատ բնակչության ընդգրկումը մեծացնելու նպատակով: Այսպիսով՝ ԸՆ ծրագրի վարչարարության նկատելի բարելավման և գրեթե 10 տոկոսով կորուստները կրճատելու շնորհիվ՝ ԸՆ ծրագրով ամենաանապահով ընտանիքների թիրախավորումը 2008թ. 67 տոկոսից 2010թ.-ին հասել է 76 տոկոսի:

- **Պահպանվել է սոցիալական ծրագրերի աղքատամետ ուղղվածությունը՝** 2008-2010 թթ. աղքատ բնակչության սպառողական զամբյուղի մոտ 43 տոկոսն ապահովվել է պետական բյուջեից ֆինանսավորված տարբեր սոցիալական ծրագրերի օգնությամբ:

- Սոցիալական ոլորտում ներդրվել է նոր ծրագիր՝ **նախադպրոցական կրթության ֆինանսավորում**՝ 4,5-5,5 տարեկան երեխաներին մեկ տարի դպրոցին նախապատրաստելու նպատակով:

- **Աճել են պետական հատկացումներն առողջապահության ոլորտին**. 2008թ. ՀՆԱ-ում դրանց մասնաբաժինը 1,4 տոկոսից ակնկալվում է հասցնել 1,7 տոկոսի՝ 2011թ.-ին:

2. Ձեռնարկված կարևորագույն քաղաքական և օրենսդրական միջոցառումների շնորհիվ բարելավվել է գործարար մթնոլորտը և ընդհանուր կառավարումը՝ հետևյալ կոնկրետ արդյունքներով.

- **Ներդրվել է հարկային ու մաքսային հայտարարագրերի էլեկտրոնային համակարգ:** Հարկային ու մաքսային վարչարարության մասով՝ էլեկտրոնային եղանակով ներկայացված հայտարարագրերի բաժինը 2008թ. 0 տոկոսից 2011թ. աճել է 20 տոկոսի:

- Մաքսազերծման կետերում **կանաչ ուղով իրականացված գործառնությունների բաժինը** (դրանց տոկոսը բոլոր մաքսային հայտարարագրերում) 2008թ. 0 տոկոսից աճել է՝ 2011թ.-ին հասնելով 15 տոկոսի: Այս նվաճումը նպաստել է Համաշխարհային բանկի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի «Գործարարություն 2012» (Doing Business-2012) զեկույցի *միջազգային առևտուր* ցուցիչում Հայաստանի վարկանիշի բարելավմանը (2008թ. 143-րդ հորիզոնականից այն 2011թ. բարձրացել է 104-րդ հորիզոնական):

- Ձեռնարկությունների առցանց գրանցման համար ներդրվել է **մեկ պատուհանի սկզբունքը,** որը դյուրինացրել է նոր բիզնեսի հիմնումը Հայաստանում: Այս բարեփոխումը, ինչպես նաև բարելավումները շինարարության թույլտվության, վարկերի ստացման, հարկերի վճարման և անվճարունակության լուծման ոլորտներում նպաստել են անցյալ տարում «Գործարարություն» զեկույցում Հայաստանի ընդհանուր վարկանիշի բարձրացմանը 6 կետով (ներկայումս այն 55-րդն է աշխարհի 183 երկրների շարքում):

- Ներքին մրցակցությունը խթանելու նպատակով կատարվել են լրամշակումներ **«Մրցակցության մասին» օրենքում** և հարակից օրենքներում, որոնք Ազգային ժողովն ընդունեց 2010թ. վերջում: Լրամշակումներում հստակեցված են այն դեպքերը, երբ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը կարող է քննություն իրականացնել և կիրարկել հակամրցակցային վարքի պարագայում միջոցներ ձեռնարկելու իր լիազորությունը:

- 2011թ. հունիսին լրամշակումներ կատարվեցին **«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքում՝** ստուգումների իրականացման կարգում ներդրվեցին ռիսկերի վրա հիմնված մոտեցումներ: Լրամշակումները կոչված են նվազեցնելու ստուգող գերատեսչությունների՝ սեփական հայեցողությամբ գործելու լիազորությունները և մեծացնելու նրանց գործունեության թափանցիկությունը:

- 2011թ. դեկտեմբերին **«Ընդերքի մասին»** նոր **օրենսգրքի** ընդունմամբ բարելավվեց հանքարդյունաբերության հատվածի հարկման ռեժիմը, ինչպես նաև բարձրացվեց նրա գրավչությունը ներդրողների համար: Նոր օրենսգիրքը կնպաստի ոլորտի կանոնակարգման շրջանակներում իրականացվող բարեփոխումներին, այդ թվում՝ լիցենզավորման, բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման, հանքերի փակման և այլ հարցերում, որոնք առնչվում են տեղական համայնքների հանդեպ հանքարդյունաբերող ընկերությունների պարտավորություններին: